# «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՎԱՎՈՐ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների և պատվավոր կոչումների մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-100-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը«տնտեսության,» բառից հետո լրացնել «քաղաքացիական ավիացիայի,» բառով.

2) 2-րդ մասը «Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչումը,» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության վաստակավոր օդաչուի պատվավոր կոչումը,» բառերով:

**Հոդված 2.** Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասը «տնտեսության,» բառից հետո լրացնել «քաղաքացիական ավիացիայի,» բառով:

**Հոդված 3.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.1-ին հոդվածով.

**«Հոդված 30.1. Հայաստանի Հանրապետության վաստակավոր օդաչուի պատվավոր կոչումը**

1. Հայաստանի Հանրապետության վաստակավոր օդաչուի պատվավոր կոչումը շնորհվում է քաղաքացիական ավիացիայի բնագավառում առնվազն 10 տարի աշխատած, առնվազն 8000 ինքնուրույն անվթար թռիչքաժամ ունեցող օդաչուներին՝ ցուցաբերած արհեստավարժության, հմտության, թռիչքների անվտանգության բարձր մակարդակի ապահովման, օդաչուական կադրերի պատրաստման գործում ունեցած մեծ վաստակի համար»:

**Հոդված 4.** Օրենքի 2-րդ հավելվածը ՀՀ գիտության վաստակավոր գործչի կրծքանշանի և շնորհագրի նկարագրությունիցև նմուշներից հետո լրացնել ՀՀ վաստակավոր օդաչուի կրծքանշանի նկարագրությունը, վկայականի և շնորհագրի նմուշները՝ համաձայն հավելվածի:

**Հոդված 5.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: